## <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունների նախագիծ

<Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրական կապիտալի համալրման հետ կապված Բանկի կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետի առաջին մասը կվերաշարադրվի հետևյալ կերպ՝

| Գործող խմբագրություն | Նոր խմբագրություն |
|---|---|
| 4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 20,489,652,500 (քսան միլիարդ չորս հարյուր ութսունինը միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 /մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ/ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 /երեսուներկու միլիոն տասը հազար/ հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 526,110,475 /հինգ հարյուր քսանվեց միլիոն մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ հատ՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով և 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 230 /երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ անվանական արժեքով: | 4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 21,588,652,530 /քսանմեկ միլիարդ հինգ հարյուր ութսունութ միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 /մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ/ հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով, 32,010,000 /երեսուներկու միլիոն տասը հազար/ հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 230 /երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 526,110,475 /հինգ հարյուր քսանվեց միլիոն մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ հատ՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով: |

**<Յունիբանկ> ԲԲԸ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն**

Թողարկվել է 4,778,261 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր՝ 230 ՀՀ դրամ տեղաբաշխման (շուկայական) արժեքով: Թողարկված բաժնետոմսերի ընդհանուր տեղաբաշխման արժեքը կազմել է 1,099,000,030 ՀՀ դրամ:
Բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և կանոնադրության փոփոխությունների գրանցման արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կհամալրվի 1,099,000,030 /մեկ միլիարդ իննսունինը միլիոն երեսուն/ ՀՀ դրամով:

<Յունիբանկ> ԲԲԸ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների վճարման կարգի հստակեցման նպատակով Բանկի կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետի երկրորդ պարբերության առաջին ենթակետը և երրորդ պարբերության առաջին ենթակետը կվերաշարադրվեն հետևյալ կերպ՝

| Գործող խմբագրություն | Նոր խմբագրություն |
|---|---|
| - Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ: | - Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով, տարեկան շահութաբաժնի հաշվարկն իրականացնել բաժնետոմսերի ձեռքբերման օրվանից՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ: |

| | |
|---|---|
| - Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ: | - Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով, տարեկան շահութաբաժնի հաշվարկն իրականացնել բաժնետոմսերի ձեռքբերման օրվանից՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ: |

<Յունիբանկ> ԲԲԸ կառավարման մարմինների իրավասությունների վերանայման նպատակով Բանկի կանոնադրության 11-րդ գլխի 11.25 կետը, 12-րդ գլխի 12.15 կետի 2-րդ և 21-րդ ենթակետերը, 13-րդ գլխի 13.4 կետի <ժ> ենթակետը կվերաշարադրվեն հետևյալ կերպ՝

| **Գործող խմբագրություն** | **Նոր խմբագրություն** |
|---|---|
| 11.25. Սույն կանոնադրության 11.24. կետով սահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել գործադիր մարմնի լուծմանը: | 11.25. Սույն կանոնադրության 11.24. կետով սահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել գործադիր մարմնի լուծմանը, բացառությամբ 11.24-րդ կետի (իթ) ենթակետով սահմանված աշխատատեղերի մասով: Վարչության նախագահին տրամադրվում է համապատասխան աշխատակիցների աշխատավարձի չափի վերանայման իրավասություն՝ Խորհրդի հաստատած Բանկի տարեկան աշխատավարձային ֆոնդը գերազանցելով ոչ ավել քան 1%-ով: |
| 12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝<br><br>- Խորհրդի հաստատմանը ներկայացնել առաջարկներ նոր սակագների ներդրման և դրանց չափերի վերաբերյալ, | 12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝<br><br>- հաստատել հաճախորդների սպասարկման միասնական սակագները և կատարել փոփոխություններ և լրացումներ, |
| 12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝<br>- Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, դրանց վարչակազմակերպական կառուցվածքները, աշխատողների հաստիքացուցակները, աշխատավարձի դրույքաչափերը, | 12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝<br>- Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, դրանց վարչակազմակերպական կառուցվածքները, աշխատատեղերը, |
| 13.4. Վարչության նախագահը Բանկի անունից լիազորված և իրավասու է՝<br>ժ) իր իրավասության սահմաններում և Վարչության որոշումների հիման վրա որոշում ընդունել Բանկի պարտապանների պարտքի վրա տոյժերի հաշվարկի դադարեցման, հաշվարկված տույժերի ու տուգանքների զեղչման, կամ ներման մասին և ներկայացնել Խորհրդի հաստատմանը, | 13.4. Վարչության նախագահը Բանկի անունից լիազորված և իրավասու է՝<br>ժ) իր իրավասության սահմաններում և Բանկի իրավասու կառավարման մարմինների որոշումների հիման վրա Բանկի պարտապանների պարտքի նկատմամբ տույժերի հաշվարկի դադարեցման, հաշվարկված տույժերի ու տուգանքների զիջման մասին առաջարկությունները ներկայացնել Վարչության հաստատմանը, |

**Проект изменений в уставе ОАО “Юнибанк”**

В связи с увеличением размера уставного капитала ОАО “Юнибанк” часть первая пункта 4.1 главы 4 устава Банка будет переизложена следующим образом:

| Действующая редакция | Новая редакция |
|---|---|
| 4.1. Уставный капитал Банка составляет 20,489,652,500 (двадцать миллиардов четыреста восемьдесят девять миллионов шестьсот пятьдесят две тысячи пятьсот) драм РА, который включает 172,886,525 /сто семьдесят два миллиона восемьсот восемьдесят шесть тысяч пятьсот двадцать пять/ размещенных обыкновенных акций, номинальной стоимостью в 100 /сто/ драм РА каждая, и 32,010,000 /тридцать два миллиона десять тысяч/ штук конвертируемых привилегированных акций класса А с фиксированным годовым дивидендом номинальной стоимостью в 100 /сто/ драм РА каждая. Количество объявленных обыкновенных акций Банка, подлежащих дополнительному размещению, составляет 526,110,475 /пятьсот двадцать шесть миллионов сто десять тысяч четыреста семьдесят пять/ штук, номинальной стоимостью в 100 /сто/ драм РА каждая, и 4,778,261 (четыре миллиона семьсот семьдесят восемь тысяч двести шестьдесят одна) штука конвертируемых привилегированных акций класса Б с фиксированным годовым дивидендом, номинальной стоимостью в 230 /двести тридцать/ драм РА каждая. | 4.1. Уставный капитал Банка составляет 21.588.652.530 /двадцать один миллиард пятьсот восемьдесят восемь миллионов шестьсот пятьдесят две тысячи пятьсот тридцать/ драм РА, который включает 172,886,525 /сто семьдесят два миллиона восемьсот восемьдесят шесть тысяч пятьсот двадцать пять/ штук размещенных обыкновенных акций, номинальной стоимостью в 100 /сто/ драм РА каждая, 32,010,000 /тридцать два миллиона десять тысяч/ штук конвертируемых привилегированных акций класса А с фиксированным годовым дивидендом, номинальной стоимостью в 100 /сто/ драм РА каждая, 4,778,261 (четыре миллиона семьсот семьдесят восемь тысяч двести шестьдесят одна) штука конвертируемых привилегированных акций класса Б с фиксированным годовым дивидендом, номинальной стоимостью в 230 /двести тридцать/ драм РА каждая. Количество объявленных обыкновенных акций Банка, подлежащих дополнительному размещению, составляет 526,110,475 /пятьсот двадцать шесть миллионов сто десять тысяч четыреста семьдесят пять/ штук, номинальной стоимостью в 100 /сто/ драм РА каждая. |

**Информация о результатах выпуска и размещения конвертируемых привилегированных акций класса Б с фиксированным годовым дивидендом**

Было выпущено 4,778,261 штука конвертируемых привилегированных акций класса Б с фиксированным годовым дивидендом, стоимостью размещения (рыночной стоимостью) 230 драм РА. Общая стоимость выпущенных акций по стоимости размещения составила 1,099,000,030 драм РА.

В результате выпуска, размещения акций и регистрации изменений в уставе уставный капитал Банка увеличится на 1,099,000,030 (один миллиард девяносто девять миллионов тридцать) драм РА.

В целях конкретизации порядка выплаты годовых дивидендов по привилегированным акциям ОАО “Юнибанк” первый подпункт второго абзаца и первый подпункт третьего абзаца пункта 4.1 главы 4 устава Банка будут переизложены следующим образом:

| Действующая редакция | Новая редакция |
|---|---|
| - размер годовых дивидендов по привилегированным акциям класса А установить по номинальной стоимости данных акций по годовой процентной ставке 12%, с выплатой не позднее, чем в трехмесячный срок после окончания финансового года.<br><br>- размер годовых дивидендов по привилегированным акциям класса Б установить по номинальной стоимости данных акций по годовой процентной ставке 12%, с выплатой не позднее, чем в трехмесячный срок после окончания финансового года. | - размер годовых дивидендов по привилегированным акциям класса А установить по номинальной стоимости данных акций по годовой процентной ставке 12%, расчет годовых дивидендов осуществить со дня приобретения акций, с выплатой не позднее, чем в трехмесячный срок после окончания финансового года.<br><br>- размер годовых дивидендов по привилегированным акциям класса Б установить по номинальной стоимости данных акций по годовой процентной ставке 12%, расчет годовых дивидендов осуществить со дня приобретения акций, с выплатой не позднее, чем в трехмесячный срок после окончания финансового года. |

В целях пересмотра полномочий органов управления ОАО “Юнибанк” пункт 11.25 главы 11, подпункт 2 и подпункт 21 пункта 12.15 главы 12, подпункт (к) пункта 13.4 главы 13 будут переизложены следующим образом:

| Действующая редакция | Новая редакция |
|---|---|
| 11.25. Полномочия, предусмотренные пунктом 11.24 настоящего устава, принадлежат исключительно Совету и не могут быть переданы исполнительному органу. | 11.25. Полномочия, предусмотренные пунктом 11.24 настоящего устава, принадлежат исключительно Совету и не могут быть переданы исполнительному органу, за исключением подпункта (ки) по части штатного расписания. Председателю Правления предоставляется полномочие по пересмотру размера заработной платы соответствующих сотрудников с превышением утвержденного Советом годового зарплатного фонда Банка на не более чем 1%. |
| 12.15. Правление уполномочено и правомочно:<br>- представлять на утверждение Совета предложения о внедрении новых тарифов и их размерах, | 12.15. Правление уполномочено и правомочно:<br>- утверждать единые тарифы обслуживания клиентов и вносить изменения и дополнения, |
| 12.15. Правление уполномочено и правомочно:<br>- представлять на утверждение Совета положения о структурных подразделениях Банка, их административно-управленческую структуру, штатное расписание персонала, размер заработной платы, | 12.15. Правление уполномочено и правомочно:<br>- представлять на утверждение Совета положения о структурных подразделениях Банка, их административно-управленческую структуру, штатное расписание, |
| 13.4. Председатель Правления от имени Банка уполномочен и правомочен:<br>к) в рамках своих полномочий и на основе решений Правления принимать решение о приостановлении начисления штрафов, прощении начисленных штрафов и пени по задолженности заемщиков Банка и представлять на утверждение Совета, | 13.4. Председатель Правления от имени Банка уполномочен и правомочен:<br>к) в рамках своих полномочий и на основе решений правомочных органов управления Банка представлять на утверждение Правления предложения о приостановлении начисления штрафов, прощении начисленных штрафов и пени по задолженности заемщиков Банка, |